Հ Ր Ա Մ Ա Ն N 219-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«03» ՄԱՅԻՍԻ 2022 Թ. **ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 16-Ի N 347-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2018 թվականի հուլիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին» N 347-Լ հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները.

1) 9-րդ կետի 1-ին ենթակետում «այլընտրանքային խափանման միջոցների» բառերից հետո լրացնել «՝ տնային կալանքի և վարչական հսկողության» բառերը.

2) 11-րդ կետի 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) օրինապահ վարքագծի ձևավորման, վերասոցիալականացման և կրկնահանցագործությունների նվազեցման նպատակով ռիսկերի և պահանջմունքների գնահատման իրականացումը.»,

3) 11-րդ կետը լրացնել նոր 9-րդ, 10-րդ և 11-րդ ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«9) ռիսկերի և պահանջմունքների գնահատման արդյունքների հիման վրա անհատական վերասոցիալականացման ծրագրերի մշակումը և իրականացումը.

10) Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլնտրանքային խափանման միջոցների՝ տնային կալանքի և վարչական

հսկողության, անվտանգության միջոցների, պատիժների և վերահսկողությունների հետ զուգահեռ կիրառվող էլեկտրոնային հսկողության իրականացումը.

11) օրենքով սահմանված կարգով այլ լիազորությունների իրականացումը:»,

4) 22-րդ կետը լրացնել նոր 2.1-ին ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«2.1) կենտրոնական մարմնի վերասոցիալականացման և վերականգնողական բաժինը,»:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ՝

5/3/2022

X

Armen Hovhannisyan

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ